ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
"Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ"

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

**ՖԻՆՔԱ ՈՒՎԿ**
**Փակ Բաժնետիրական Ընկերություն**
**ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոս փ. 2ա, հեռ. (+374 12) 55 55 55**
**էլ. փոստ info@finca.am**
**Հաշվետվություն թիվ 2, 04.02.2019թ.**

*"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը":*

ստորագրող անձինք՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| Անուշ Պետրոսյան | Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն | | 04.02.19 |
| Լուսինե Սահակյան Հայես | Վարչության անդամ, Գլխավոր գործառնական տնօրեն | | 04.02.19թ |
| Արտակ Միքայելյան | Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ | | 04.02.2019թ |
| Հարություն Չադրյան | Վարչության անդամ, Իրավաբանական բաժնի ղեկավար | | 04.02.2019թ. |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| Հրաչյա Թոխմախյան | Վարչության նախագահ, Գլխավոր տնօրեն | | 04.02.2019թ |

04 փետրվար 2019թ.

«ՖԻՆՔԱ» "FINCA" 00445174
ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ UNIVERSAL CREDIT ORGANIZATION CJSC RA YEREVAN

# ՏԵՂԵԿԱՆՔ

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների խորհրդի N 03/2019 որոշում առ 30 հունվար 2019թ.:

Տնօրենների խորհրդի անդամները, հիմք ընդունելով 29.10.2018թ. թիվ 25/2018 որոշումը, որոշեցին.

1. Հաստատել 2,000,000 (երկու միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով, անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսերի երկրորդ փուլի թողարկումը երեք տարի ժամկետով, 6% (վեց տոկոս) տարեկան տոկոսադրույքով:

2. Տեղաբաշխումն իրականացնել «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, որից 1,800,000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով 72,000 (յոթանասուներկու հազար) հատ պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել ստանդարտ փակ աճուրդի անցկացման միջոցով՝ ընդ որում բացառելով ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտերի ներկայացումը, իսկ մնացած 200,000 (եկու հարյուր հազար) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 8,000 (ութ հազար) հատ պարտատոմսերը ձեռք է բերվելու «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ կողմից անվանական արժեքով՝ որպես շուկա ստեղծող՝ երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիության և ներդրումային գրավչության բարձրացման նպատակով:

3. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել 2019 թվականի փետրվարի 25-ին՝ մեկանգամյա աճուրդի անցկացման միջոցով, ըստ թողարկման վերջնական պայմանների: